

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի պատվիրակության այցը Ռուսաստանի Դաշնության Նիժնի Նովգորոդի մարզ՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի գլխավորությամբ

2015 թվականի մայիսի 19-20-ը Վայոց ձորի պատվիրակությունը՝ ՀՀ Վայոց ձորի մարզի և ՌԴ Նիժնի Նովգորոդի մարզի միջև 19.04.2011 թվականին ստորագրված առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային բնագավառներում Համագործակցության համաձայնագրի շրջանակում պաշտոնական այցով Նիժնի Նովգորոդի մարզում էր: Պատվիրակությունը գլխավորում էր ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը: Պատվիրակության կազմում էին Վայոց ձորի մարզպետի խորհրդական Վասիլ Ասլանյանը և «<Ջերմուկ աշխարհ>> առողջարանի սեփականատեր Կարեն Ավագյանը:

Մայիսի 19-ին հայկական պատվիրակությունն այցելեց Նիժնի Նովգորոդ քաղաքի գլխավոր հասարակաքաղաքական և պատմամշակութային համալիր՝ Կրեմլ:

Այցի շրջանակներում պատվիրակությունը հարգանքի տուրք մատուցեց՝ Հայրենական Մեծ Պատերազմում Նիժնի Նովգորոդ քաղաքի պաշտպանության համար զոհվածների հիշատակին նվիրված «Անմար կրակ» հուշահամալիրում:

Նիժնի Նովգորոդի մարզպետարանի միջազգային կապերի վարչության կողմից ճանաչողական շրջայց կազմակերպվեց Նիժնի Նովգորոդի Կրեմլի տարածքում: Կրեմլում կատարած շրջայցից հետո պատվիրակությունը՝ Նիժնի Նովգորոդի հայ համայնքի ղեկավար Ադասի Ալեքսանի ուղեկցությամբ այցելեց «Սուրբ Ամենափրկիչ» հայկական եկեղեցի: Եկեղեցու առաջին հարկում է գտնվում 1915 թվականի Եղեռնի զոհերի 100 անյակին նվիրված նորաստեղծ թանգարանը, որտեղ մեր պատվիրակության անդամները ևս մեկ անգամ վերհիշեցին 20-րդ դարի սարսափելի ոճրագործությունը:

Թանգարան կատարած այցից հետո մեր պատվիրակությունը՝ Նիժնի Նովգորոդ մարզի մշակույթի նախարարի և միջազգային կապերի վարչության պետի հետ եղան Նիժնի Նովգորոդ քաղաքի պատկերասրահում և ծանոթացան ռուս ականավոր նկարիչների գործերին:

Այնուհետև տեղի ունեցավ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի և ՌԴ Նիժնի Նովգորոդի մարզպետ Վալերի Շանցևի պաշտոնական հանդիպումը: Հանդիպմանը մասնակցում էին նաև Նիժնի Նովգորոդի մարզպետարանի պաշտոնատար այլ անձինք: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Համագործակցության համաձայնագրի շրջանակներում կատարված աշխատանքները և տնտեսական, մշակութային և գիտական ոլորտներում համագործակցության հետագա զարգացումների հնարավորությունները և հեռանկարները: Հանդիպման ավարտին Հ. Սարգսյանը և Վ. Շանցևը հուշանվերներ փոխանցեցին միմյանց:

Պաշտոնական հանդիպումից հետո պատվիրակությունը Նիժնի Նովգորոդի մարզպետ Վ. Շանցևի ուղեկցությամբ այցելեց Նիժնի Նովգորոդի թիվ 18 մանկական արվեստի դպրոց: Վայոց ձորի պատվիրակության այցի նպատակներից մեկը մանկական արվեստի դպրոցի անվանակոչման հանդիսավոր արարողությանը մասնակցելն էր: Նիժնի Նովգորոդի թիվ 18 մանկական արվեստի դպրոցն այժմ կրում է հայ անվանի և հանրահայտ հայրենակից Արամ Խաչատրյանի անունը: Անվանակոչման արարողությանը հաջորդեց համերգ, որը կազմակերպվել էր հայ համայնքի հետ համատեղ: Նիժնի Նովգորոդի Արամ Խաչատրյանի անվան թիվ 18 մանկական

արվեստի դպրոցի տնօրինությունը փոքրիկ շրջայց կազմակերպեց պատվիրակության անդամների համար:

Դպրոց կատարած այցից հետո հայկական պատվիրակությունը մասնակցեց ՌԴ Նիժնի Նովգորոդի մարզպետ Վ. Շանցևի կողմից տրված պաշտոնական ընթրիքին:

Մայիսի 20-ին Նիժնի Նովգորոդի <<Կրեմլում>> հանդիպում անցկացվեց Վայոց ձորի պատվիրակության և Նիժնի Նովգորոդ մարզի Փոքր և միջին բիզնեսի աջակցության, սպառողական շուկայի և ծառայությունների մատուցման նախարարության, ինչպես նաև Նիժնի Նովգորոդ մարզի խոշոր առևտրային ցանցերի ներկայացուցիչների միջև: Հանդիպումը վարում էին՝ Վայոց ձորի պատվիրակության կողմից Վայոց ձորի մարզպետի խորհրդական Վասիլ Ասլանյանը, իսկ Նիժնի Նովգորոդի կողմից՝ Նիժնի Նովգորոդ մարզի փոքր և միջին բիզնեսի աջակցության, սպառողական շուկայի և ծառայությունների մատուցման նախարարի տեղակալ Մաքսիմ Պոդոլնիկովը:

Հանդիպման առաջին մասում մասնակիցները ներկայացրեցին Նիժնի Նովգորոդի և Վայոց ձորի մարզերի տնտեսական հնարավորությունները և ներուժը, քննարկվեցին գյուղատնտեսական արտադրանքի արտահանման հետ կապված հիմնախնդիրներ՝ համագործակցության հետագա քայլերի արդյունավետ իրականացման նպատակով:

Հանդիպման երկրորդ մասում Վայոց ձորի պատվիրակությունը նկարահանված փոքր ֆիլմերի միջոցով ներկայացրեց Վայոց ձորի տեսարժան վայրերը, մարզի զբոսաշրջության զարգացման համար առկա ռեսուրսները: Ֆիլմը մեծ հետաքրքրություն առաջացրեց և Նիժնի Նովգորոդի պատվիրակության անդամները առաջարկեցին այցելել Վայոց ձորի մարզ և տեղում ծանոթանալ մարզի՝ այս ոլորտում բոլոր հնարավորություններին և ռեսուրսներին: Նիժնի Նովգորոդի պատվիրակությունը ևս փոքրիկ ֆիլմով ներկայացրեց մարզի զբոսաշրջության ոլորտը:

Այնուհետև Վայոց ձորի պատվիրակությունը՝ մարզպետ Հ. Սարգսյանի գլխավորությամբ այցելեց <<Գագ>> ԲԲԸ: Գործարանում պատվիրակության անդամների համար կազմակերպվեց շրջայց, ներկայացվեցին գործարանի արտադրանքները: Հանդիպում տեղի ունեցավ գործարանի ղեկավարության հետ, որի ընթացքում քննարկվեցին հնարավոր համագործակցության հեռանկարները և պայմանները: Պատվիրակությունը այցելեց նաև <<Գագ>> ԲԲԸ-ի գործունեությունը և պատմությունը ներկայացնող թանգարան:

Այնուհետև Վայոց ձորի պատվիրակությունը, Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանի գլխավորությամբ, հանդիպեց հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

ՀՀ Վայոց ձորի պատվիրակությանը այցը ՌԴ Նիժնի Նովգորոդի մարզ ավարտվեց մայիսի 21-ին: